

**ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Պաշտոնի (գրադուսքի) անվանումը	Ոսկերիչ
Դերը	Գունավոր և թանկարժեք մետաղներից (ոսկի, արծաթ, պալադիում, պլատին, ռոդիում)՝ բնական և արհեստական ոսկերչական քարերով և առանց քարերի զարդերի, դեկորատիվ և կիրառական առարկաների պատրաստում, վերանորոգում:
<b>Խնդիրների բնագավառ 1. Համաձուլվածքի պատրաստում</b>	
Աշխատանքային գործընթացը	Ոսկերիչն ստանում է թանկարժեք մետաղի չափաքանակը, ընտրում է համաձուլվածքի բաղադրիչները՝ ըստ պահանջվող չափաքանակի, օժանդակ նյութեր, գործիքներ և հարմարանքներ: Հալեցնում է մետաղները՝ պահպանելով դրանց անհրաժեշտ հաջորդականությունը, կաղապարում է, կշռում և գրանցում է համաձուլվածքը:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> <li>• Պահանջվող համաձուլվածքը ստացված է:</li> <li>• Ձուլակտորը համապատասխանում է պահանջվող հարգանիշին:</li> <li>• Նյութերի օգտագործման չափերի ստուգման արդյունքը բավարար է:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 2. Նախապատրաստուքի ստացում</b>	
Աշխատանքային գործընթացը	Ոսկերիչը տեխնիկական քարտում նշված չափերով պատրաստում է նախապատրաստուքներ՝ կիրառելով ոսկերչական պրակտիկայում ընդունված ձևերն ու մեթոդները (գլոցում, լարածում, դրոշմում, ձուլում, փականագործական աշխատանքներ, հյուսվածքային տեխնիկա):
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> <li>• Պատրաստված նախապատրաստուքները համապատասխանում են տեխնիկական քարտի պահանջներին, աշխատանքային էսքիզին:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 3. Շինվածքի հավաքում, գողում</b>	
Աշխատանքային գործընթացը	Ոսկերիչը նախապատրաստուքներից հավաքում է շինվածքը՝ ըստ աշխատանքային էսքիզի՝ գողման, սարքահաստման, հողակապային (շարնիրային) միացությունների, գամման եղանակներով:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> <li>• Շինվածքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին:</li> <li>• Զողված և գամված դետալները (մանրակները) ունեն հուսալի ամրություն:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 4. Ընթացիկ մշակում</b>	
Աշխատանքային գործընթացը	Վերացնում է շինվածքի հավաքման ընթացքում դրա մակերեսին առաջացած ավելորդուկները, կարգավորում է հողակապային և զսպանակային մանրակները (եթե այդպիսիք կան):
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> <li>• Զողման և գամման տեղերն աննկատ են:</li> <li>• Հողակապային և զսպանակային դետալներն ու փականներն աշխատում են անխափան:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 5. Քարերի տեղադրում</b>	
Աշխատանքային գործընթացը	Ոսկերիչը տեղադրում է ոսկերչական քարերն՝ ըստ աշխատանքային էսքիզի՝ ոսկերչության պրակտիկայում ընդունված՝ քարերի ամրացման ձևերով (խուլ, կռապանային, կոռներային):
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> <li>• Քարերը տեղադրված են ճիշտ ու անվնաս և հուսալի ամրացված են:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 6. Վերջնական մշակում և նախշագարդում</b>	
Աշխատանքային գործընթացը	Ոսկերիչը փայլեցնում, մաքրում և լվանում է շինվածքը, հարկ եղած դեպքում, նախշագարդում այն՝ ըստ էսքիզի:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> <li>• Շինվածքի արտաքին մակերեսի հայելանման փայլը, նախշագարդված մասերի նրբարվեստ լինելը, շինվածքի ապրանքային տեսքը:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 7. Կատարված աշխատանքի հանձնում</b>	
Աշխատանքային գործընթացը	Ոսկերիչը մաքրում է աշխատասեղանը, գործիքները, արտահագուստը, ձուլակտորի է վերածում աշխատանքի ընթացքում առաջացած թանկարժեք

	մետաղի կտորտանքը և խարտվածքը: Ստացված ձուլակտորը շինվածքի հետ կշռում և հանձնում է:
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Հանձնված թանկարժեք մետաղի ձուլակտորը համապատասխանում է գրանցված մետաղի հարգանիշին և քաշին՝ հաշվի առնելով աշխատանքի ընթացքում թանկարժեք մետաղի բնականոն կորստի նորման:</li> <li>• Աշխատատեղը, գործիքները, արտահագուստը մաքուր են:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 8. Վերանորոգման աշխատանքներ</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Ոսկերիչը վերանորոգման ենթակա ոսկերչական իրը բերում է առաջնային տեսքի՝ կատարելով անհրաժեշտ գործողություններ:
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վերանորոգված մասը չի առանձնանում ոսկերչական իրի ընդհանուր տեսքից:</li> <li>• Վերականգնված է շարժական կամ զսպանակային մասերի աշխատանքը:</li> </ul>
<b>Պատասխանատվությունը և բարդության աստիճանը</b>	
<b>Բարդության աստիճան</b>	Պարզ և միջին բարդության
<b>Պատասխանատվությունը</b>	Կատարված աշխատանքի ճշգրտությունը, որակը և հատկացված ժամանակում կատարելը
<b>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</b>	
<b>Լեզուները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Հայերեն,</li> <li>• օտար լեզվի մասնակի իմացություն, շփվելու և մասնագիտական գրականությունից օգտվելու համար:</li> </ul>
<b>Համակարգիչը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ոսկերչությանը վերաբերող ծրագրերով աշխատելու համար:</li> </ul>
<b>Գիտելիքը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Մասնագիտության մեջ օգտագործվող գունավոր, սև և թանկարժեք մետաղների ու նրանց համաձուլվածքների քիմիական, ֆիզիկական և մեխանիկական հատկություններին վերաբերվող գիտելիքների իմացություն:</li> <li>• Մասնագիտական գործիքների, սարքավորումների, հաստոցների աշխատանքային ձևերի իմացություն:</li> <li>• Ոսկերչական քարերի հատկությունների մասին գիտելիքներ:</li> <li>• Մասնագիտական ոլորտում օգտագործվող քիմիական նյութերի և նրանց միացությունների մասին գիտելիքներ:</li> <li>• Գծագրական, գծանկրային, կոմպոզիցիոն, քանդակային աշխատանքներ կատարելու հիմունքների իմացություն:</li> <li>• Մաթեմատիկական ոչ բարդ հաշվարկներ կատարելու իմացություն:</li> <li>• Աշխատանքի անվտանգության, հակահրդեհային և քիմիական նյութերով աշխատելու անվտանգության ընդհանուր կանոնների իմացություն:</li> <li>• Հաշվապահական գիտելիքներ "անհատ ձեռներեց" տնտեսվարող սուբյեկտի մակարդակով:</li> <li>• Բնության պահպանման և շրջակա միջավայրը չախտոտելու իմացություն:</li> </ul>
<b>Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Տեխնիկական քարտեր կարդալու և տեխնիկական էսքիզներից օգտվելու կարողություն:</li> <li>• Նախնական էսքիզներ նկարելու և գծագրելու կարողություն:</li> <li>• Աշխատանքային անվտանգության և առողջության պահպանման նորմատիվ պահանջների իմացություն</li> <li>• Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ձեռք բերման օրինական կարգը:</li> <li>• Քիմիական նյութերով աշխատելու կարողություն:</li> <li>• Մետաղների գեղարվեստական մշակման համար նախատեսված գործիքներից, սարքավորումներից, հաստոցներից օգտվելու կարողություն:</li> <li>• Թանկարժեք մետաղների համաձուլվածքներ պատրաստելու և դրանց հարգանիշը ստուգելու կարողություն</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Համաձուլվածքների ձուլակտորների ճշգրիտ պատրաստում, աշխատանքի ընթացքում թանկարժեք մետաղի բնականոն կորստի նորմերի կրճատում:</li> <li>• Թանկարժեք մետաղներից միջին բարդության շինվածքներ պատրաստելու կարողություն:</li> <li>• Ոսկերչական շինվածքների պատրաստման համար նախատեսված ժամաքանակի սահմաններում տեխնիկական գծագրերով աշխատանքների ճշգրիտ և որակյալ կատարում:</li> <li>• Աշխատանքային օրենսգրքի նորմատիվ պահանջների իմացություն:</li> <li>• Հարկային դաշտում աշխատելու իրավական պահանջները:</li> <li>• Մեփական մտահաղացումները առաջարկելու կարողություն:</li> <li>• Հանձնարարականները ժամանակին և որակով կատարելու պատրաստակամություն, հանձնարարականները ճշգրտելու կարողություն:</li> <li>• Անհատական և խմբային աշխատանք կատարելու կարողություն:</li> <li>• Մարդկանց հետ շփվելու կարողություն:</li> </ul>
--	--

**ՀԱՎԵԼՎԱԾ 2**

**ԱՐՀԵՍՏԱՎՈՐԻ «ՈՍԿԵՐԻՉ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Արհեստավորի «Ոսկերիչ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. պետական կրթական (որակավորման) չափորոշի բոլոր մոդուլների համապատասխան ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է համալիր թեստային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող՝ ընդհանուր թվով 40 հարցից:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեստային առաջադրանքի հարցերի առնվազն 95%-ին:

2. մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել հետևյալ գործողությունները՝

- նախօրոք կշռված հումքից համալիր աշխատանքների միջոցով՝ ըստ տրված աշխատանքային քարտի կամ էքիզի, առավելագույնը 30 ժամում պատրաստել միջին բարդության ոսկերչական իր, բերել այն վերջնական տեսքի և կատարել դրա հանձնում՝ ըստ սահմանված կարգի:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշչով սահմանված՝ համապատասխան կատարման չափանիշներին համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները: